



ՃԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ - ԽՄԲԱԳԻՐ

ԵՆՈՎՋԵ ԱՐՄԷՆ

55-րդ. ՏԱՐԻ ՆՈՐ ՇՐՋԱՆ

ԹԻՒ 39

22 ՍԵՊՏԵՄԲ. 1907

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ

Թաւառնեանի Կտակը

«ՄԱՍԻՍ»Ի ԵԱՆՔԻՆ

Սիւլլի Քրիստո [Ուսումնասիրութիւն]

ՄԵՐՈՒԺԱՆ ՊԱՐՍԱՄԵԱՆ

Դիտարկւմը Բանաստեղծութեան մէջ

ՏՕՄԻՆՕ

Արեւադէմը Տիւրքիոյ մէջ

X.

Դիտարկում

Հանրի Հայնի

ՄԵԼԻՔ ԹԷՎԷԲԷԼ

Ճեմարանի Ծաղիկի գնահատումը

ԽՄԲ.

Մասիսի շուրջը

Եւրոպականի Կտակը

Նոր Գրքեր

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳԻՐ. ՃԻՆՈՒՆ

1907

THE UNIVERSITY OF CHICAGO

OFFICE OF THE DEAN

1100 S. MICHIGAN AVE. CHICAGO, ILL. 60607

Phone 371-4100

For information, contact the Office of the Dean

or the Office of the Registrar

The University of Chicago is a private, non-sectarian, research university. It was founded in 1837 and is one of the oldest and most prestigious universities in the United States. The university is known for its commitment to academic excellence and its diverse student body. It offers a wide range of undergraduate and graduate programs in various fields of study. The university is also known for its research contributions and its role in shaping the future of the world. The Office of the Dean and the Office of the Registrar are responsible for providing information and support to students and faculty. They work together to ensure that the university's mission is fulfilled and that all members of the university community are able to thrive. The university is a place of learning, discovery, and growth. It is a place where the future is being shaped one student at a time.

ՏՕՔԹ Ե՝ ՄԱՍԻՍ

ԲԵՐԱ, ԹԱԳՍԻՄ ՓՈԳՈՅ,

ԹԻԻ 12

Ս.Մ.Ն. տեսակ ներքին հիւանդութիւններէ
զատ, մասնագիտաբար և երկար ատրի
ներէ ի վեր կը դարմանէ ստամոքսի,
աղիքներու, միզային ճամբաներու հիւանդութիւնները, ջգային տկա-
րութիւնները, հին և նոր գաղխակա՛ն ախտերը: Այս վերջին
ախտերը՝ առանց ստամոքսի խանգարման և նորադոյն մեթոանե-
րով կը բուժէ կարճ միջոցի մէջ, Հիւանդ կ'ընդունի ամէն օր կէս
օրէ վերջը: Չորեքշաբթի օրերը միայն ձրի:



Անկարելի է օր ընտանիք մը առանց
կարի մեքենայի մնայ, բայց էական
կէտն է լաւ մեքենայ մը ունենալ,
որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ
և անհամար ծառայութիւններ կը
մատուցանէ, մինչդեռ դէշ տեսակէ
մեքենայ մը անվերջ դժգոհութեանց
և տաղտուկի աղբիւր մըն է:

Իսկոր աշխարհ գիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Է Ր

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՍ. ՊԱՆԱՏԱՆ

The Singer Manufacturing Cie.

Չեռփի, ոսփի ու ոսփի եւ ձեռփի
միանգամայն մեքենաներ
կը գտնուին:

մեքենան լաւագոյնն է. այս մե-
քենան ամէնէն աւելի կատարելա-
գործութեամբ, հաստատունը և դիւրա-
գործածելին ըլլալուն՝ բովանդա-
պախարհի մէջ՝ ամէն ոք Սինկերի մե-
քենաները կը զնէ:

Սինկերի մեքենաները կը ծախուին միմիայն Սինկերի Ընկերու-
թեան վաճառատուններուն մէջ:

Ն
Ա
Ս
Ի
Ն
Կ
Է
Ր
Ս
Ի
Ն
Կ
Է
Ր
Ս
Ի
Ն
Կ
Է
Ր

ԿԱՆԱԹԱՍ

ԲԵՐԱ

ՊՈԼԻՍ

ՍԵՆՏԱՐ

1. Մեծ փողոց, Պօն Մառէի դէմ, 343 և 343.
2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիւնին դէմ.
1. Սինկեր խան, Թիւնէլին հետեւ.
2. Գարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ.
1. Սուլթան Համամ.
2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայանին դէմ. 13.
- 2աբլը Պօյու, Թ. 120.

Դասերը եւ նորոգութիւնները ձրի:

Կատարելա երաշխաւորութիւն:

Մասնաւիւղեր գաւառներու բոլոր փողոցներուն մէջ

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա,
Մեծ փողոց, Թիւ 343 և 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւղօղլուի տունը:

Թիւերը յաջողապէս կտրելու մեր Մրցու-
մին մէջ բացարձակ առաջնութիւնը չափած է Օր. Մաթիւա Տիրատու-
եան (Սամաթիայէն) , որ անթերի կատարելութեան մը միացուցած
է ասեղնագործական ճարտար հմտք մը : Կը խնդրուի ներկա-
յայնել իր լուսանկարը, ստանալու համար ակռանձխընանը , պատ-
րաստուելէն ետքը : Մօտաւոր յաջողութիւնով կտրած են նաև Միշ-
բան Էլվան , Օր. Այբ. Մէն. Գիմ. , Օր. Եւդինէ Գլանունի :

Նախորդ չարթուան մեր Ժամանցին ստացուած բազմաթիւ ճիշդ
պատասխաններէն , վիճակով պարգեւը կը ստանայ Տիար Կարպիս
Քէմհաճեան : Կը խնդրուի ներկայայնել իր լուսանկարը , ստանալու
համար ակռանձխընանը : Պատասխանն է , ինչպէս ստորև կը տես-
նուի , « ՊԱՏՈՒԷ ՀՍ.ՅՐԴ ՈՒ ՄԱՅՐԴ » , երբ երեք երկուքնոցով կը
գոցուին աւելորդ տաւերը : Ճիշդ գտած են նաև . — Վ. Մալխասեան,
Արչակ Պօսիկեան , Ե. Վահան , Գարրիէլ Հիսարլեան , Էմմանուէլ Բալ-
եան , Զարեհ Դալֆաեան , Յովհաննէս Սինանեան , Լեւոն Համբար-
ձումեան , Գրիգոր Թագաթեան , Վ. Մէրեճմ-Գուլի , Վահէ Ալմէրճեան,
Գ. Թէրճէմանեան , Հայկ Զէնկինեան , Յովհաննէս Թանթապրունեան,
Օր. Տիրուհի Պօստանճեան , Սուրէն Եսդուպեան , Սեդրակ Կաւկառ-
եան , Կարապետ Լօքմաճեան , Գր. Կիրակոսեան , Ո. Սօլախեանց , Օր.
Մաննիկ Տ. Յակոբեան , Միհրան Էլվան , Հրաչեայ Եռասուֆեան , Օր.
Այբ. Մէն. Գիմ. , Արամ Կիւլէրեան , Վահան Տէօքմէճեան , Օր. Ար-
մինէ Մեղեքեան , Մկրտիչ Տ. Աբրահամեան :

ՊԱ
ՈՒ

Տ
Է

ՄԱՅ

ՀԱ

ՅՐԴ

ՈՒ

ՂԶ

Յաջորդ թիւով պիտի ծանուցանենք արդիւնքը թիւ 37ի մեր Հաշ-
ուական Մրցումին :

Հարսանիկան եւ անունի երեկոյթներու ճաշի պատրաստութեան եւ
սպասարկութեան համար՝ զիմել ճաշարանատէր Տիար Ղազարոսի ,
Խօրասանճեան Խան :



ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
ԵՆՈՎԻՑ ԵՐՄԵՆ

55-րդ. ՏԱՐԻ ՆՈՐ ՇՐՋԱՆ

ԹԻԻ 39

22 ՍԵՊՏԵՄԲ. 1907

ԹԱԻՇԱՆՋԵԱՆԻ ԿՏԱԿԸ

Հանգուցեալ Թաւեաննեանի Կտակին ունեցած Կառեւորութեանը պատկանող, ժամանակին գրած էինք Ամերիկայի մեր քղրակիցին, Նիւ-Եօք հաստատուած գրագէտ վաճառական մը, փութալու մեզ հաղորդել, Կտակին բացուած ասեմ, անոր տամադրութիւնները : Մեր քղրակիցը այդ մասին կը հաղորդէ հետեւեալ շահեկան տեղեկութիւնները, եւ ուրախ ենք՝ մեր Մամուլին մէջ առաջին լրատունը ըլլալուս՝ այս շահագրգռական Կտակին մասին : —

«Թաւշանձեանի Կտակը բանալու համար ամերիկեան կառավարութեան կողմէ անհրաժեշտ նկատուող երկու ազգականները, Տօքթ. Թիրեաքեան Խան և Ալեանաբեան Էֆ. որոնց հետագրուած էր Ամերիկա փութալու, հասան հոս և Թաւշանձեան ընտանիքին, ինչպէս նաև բազմամիւ ծանօթներու կողմէ ընդունուեցան բարի-գալուստի սրտագին ողջոյններով : Իրենց կ'ընկերանայ Մ. Մուրատեան Էֆ. և Արամ Էֆ. Ալեանաբեան, որ Բարիզէն միացած է հօրը : Տեղական թերթերը անմիջապէս արձանագրեցին այս ժամանումը և ոմանք հրատարակեցին լրատնկարները Կտակի վկաներուն և Տեղական Հայ Ժողովուրդը մեծ համեմատութեամբ մը հետաքրքրուած է.

Կտակին հարցով և գրեթէ օրուան խօսակցութեան միակ նիւթն է անիկա, որչափ տուներու՝ նոյնչափ զբօսառեղիներու մէջ։ Թաւշանձեանի բարեկամներէն ու ծանօթներէն բազմաթիւ են անոնք՝ որ մինչեւ . . . իրենց ալ բաժին մը սպասելու միտմտութեան կը հասնեն գործը։ Ժամանումին յաջորդ օրէն, տեսակցութիւններ և բանակցութիւններ տեղի ունեցան հոս ժամանող հիւրերուն և ամերիկեան ձեռնհաս պաշտօնարանին միջև, Կտակը բանալու խնդիրին շուրջը։ Այս առիթով ճշգրտեցան երկու կողմի փոխադարձ իրաւասութեան խնդիրները և որոշ եզրակացութեան մը յանգեցան, իրենց ձեռնհասութիւնը ճշգրտ։ Ամերիկեան թերթերը օրը օրին արձագանգ կ'ըլլան կատարուած բանակցութեանց, չթերսնալով, իրենց կարգին, ամերիկեան թերթերու յատուկ փութկոտութեամբ, խորնորոտութիւններ առ տեսութիւններ աւելցնելու այս կարեւոր Կտակին շուրջը։ Ամէն մարդ հետաքրքրուած է այս հարցով և ընտանեկան բազմաթիւ շրջանակներու խօսակցութեան նիւթը կը կազմէ օրուան այս Կտակը, ինչպէս կը տեղեկացնեն ինծի Ամերիկացի բարեկամներս և ինչպէս ես իսկ առիթը կ'ունենամ տկանչալուր ըլլալու։ Ու այս հետաքրքրութիւնը կրկնակ պատճառներով. նախ որովհետեւ տեղական առեւտրական շրջանակին մէջ նշանակելի զիրք մը կը զրաւէր հանգուցեալը և սիրուած դէմք մը դարձած էր քաղաքի ժողովուրդին մէջ. և երկրորդ, որովհետեւ իր առեւտրական գործը, իր Տոնը, անտեսական ամուր կապակցութիւններու մէջ կը գտնուի զանազան տեղական առեւտրական հաստատութիւններու հետ, որոնք-գործերու բնական բերումով, լրջօրէն կը շահադրողութիւն Թաւշանձեան Տոնի ձակառաղիրին հարցերովը։ Եւ կ'ուզէ՞ որ հոս անգլադոնապոնութիւն մը ընենք, յայտնութիւն մը՝ որ իրմէ լսուած ըլլալու վաւերականութեան առաւելութիւնն ալ ունի։ Թաւշանձեան, օր մը, կենդանութեանը, կ'ըսէ իր մտերիմներէն մէկուն. «Այսօր եթէ մեռնիմ, վաղը այն գործը շարունակող մը չըլլալով կը զոցուի»։ Ատոր պատճառներէն մէկը՝ կարող մէկը չունենալն է եղբի, իր յայտարարութեան համաձայն. երկրորդ պատճառը դասի ինչալու վրանն է, ինչ որ հիմա բիշ մը հաւանականութեան գոյներ կ'առնէ։ Եւ անոր համար այս կասկածը, որովհետեւ, զարմանալի թուի թերեւ, օր չանցնիր որ նոր ժառանգորդներ չեւլեն։ Ասանք ամէն կողմէ կը փութան և մէյ մէկ պատրուակներով մաս մը կ'ակնկալեն։ Իրաւասութեան փառաբեր ալ մէջտեղ դնելով։ Շատ զուարճալի է ասանց զիրքը և պարզած կացութիւնը թէ ժառանգորդներուն և թէ կտակակատար պաշտօնարանին շուրջը։ Շարունակ գիմում, շարունակ վաւերաթուղթերու ներկայացում, անխոնջ, անդադար և խեղճ մարդիկը ընելիքին չեն գիտեր. և տեսնէք ի՞նչ նկատումներու և ի՞նչ հաշիւներու վրայ կ'առնուէն։ Մօտէն ակնհասեալ ըլլալով այս իրարմոցումներուն, կը տեսնեմ ու կը լսեմ թէ՛ ո՛րչափ տաղտուկ կը պատճառեն այս ինքնակոչ ժառանգորդները յարգելի կտակակատար հիւրերուն և իրական ժառանգորդներուն։ Բայց զո՛ւր ջանք։ Ամերիկան օրէնքով, ժառանգորդները երբ անչափահաս ըլլան, եղած չեղած կը ծախուի և վաւիճի կտակարարութիւնը կ'ըլլայ, ո՛չ մայր, ո՛չ ուրիշ անձ, պայմանով որ կտակը մասնաւոր տրամադրութիւններ չունենայ գործը շարունակելու մասին։ Հոս չմոռնամ աւելցնել որ, — աչքերնիդ լոյս, — մեծ յոյսեր ու հաւանականութիւններ կան, ձե՛ր ալ նպաստաւորութեան, այս Կտակէն։ Շատ տարիներէ ի վեր հոս հաստատուած վաճառական մը, որ սերտ մտերմութեան մէջ գտնուած է Թաւշանձեանի հետ, անոր կենդանութեանը՝ ատեն, անցեալ օր բերնէն փախցուց աս՝ յայտնութիւնը թէ՛ Թաւշանձեան օր մը զուարթութեան մը պահուն անգարնապոնութիւնը ունեցեր է իրեն յայտարարելու որ՝ անպատճառ Պիլոյոյ Հայ թերթերուն ալ բան մը պիտի կտակէ օր մը։ Զարմանալի չեմ գտներ և կը յուսամ որ ալքոլամոլութեան չեմ շատացով յարգելի հանգուցեալը՝ այդ գեղեցիկ զգացումը ունեցած ըլլայ։ Մաղթեցէ՛ր, — և ես ալ մաղթող եմ, — որ ծրարուած

Կտակը Կասակ չեկող : Վերջացնեմ՝ ըսելով թէ՛ Կտակը բացուելու համար ամբիս մը չափ պայմանաւոր որոշուած է : Բացուելու պարագային , բոլորովին private հանգամանք մը պիտի ունենայ . Թէև կարգ մը Կտակէն բաժին ակնկալող անձեր ինքզինքնին այդ private շրջանակէն ներս force ընել կ'ուզեն կոր , բայց չպիտի յաջողին : Բացուած ատեն , առաջինը կ'ըլլամ , վստահ եղէք , յարգոյ խմբագրուպետ և բարեկամ , ամենամեծ փութկոտութեամբ բովանդակութիւնը Մասիսի հաղորդող , Մասիսի՝ որ կը տեսնեմ թէ տիպար աշտարձանութիւն մը ունի ընթերցող հասարակութիւնը շահագրգռող հարցերու վրայ իր հրատարակութիւններով :

«ՄԱՍԻՍ»Ի ԵԱՆՔԻՆ

Ս Ի Ի Լ Լ Ի Բ Ի Ի Տ Ո Ս

«Շշանաւոր բանաստեղծ եւ Թրանսսկան Ակադեմիի անդամ Սիւլի Բրիւտտօ մեռաւ երէկ Շամբընէի իր վիլլան մէջ՝ Բարիզի մօտ» :

Բարիզէն հեռագրուած այս տիտեր լուրը կը ցնցէ զիս : Բնող լղկացողիչ բան մը կայ մահուան մտածումին մէջ : Իրա՞ւ է որ , մեր այս մարմինովը , կենդանական յորինուածքովը , ամբողջ խորհելու արամադրութիւններովը ու յատկութիւններովը՝ փոշիի պիտի վերածուինք , հող պիտի դառնանք և՛ որդերը , գետինի ճճիւնները ուղեղնիս պիտի կրծեն ու սովալլուկ ծծկը մեր աչքերը պիտի փորեն :

Բանաստեղծը իր տունին տարաէզին մէջ կը պտըտի եղեր , երբ ծունկերը կը կթօային , տկարութիւն մը կուգայ վրան : Զանիկա կը փոխադրեն պզտիկ սենեակ մը , որ իբր ննջարան և ընթերցարան կը ծառայէր իրեն : Դիչ մը ետքը ինքզինքին գիտակցութիւնը կը կորսնցնէ , մարմինը կը պաղի , նայուածքը անկիւն մը կը մխուր հրաչէկ ընկենի մը պէս . ու կը մեռնի :

Լինյա՛ւ :

Պատիւի Լեզէոնի աստիճանաւոր մը ըլլալուն համար , զինուորական պատիւներով կը կատարուի յուղարկութեան հանդէսը , Բարիզի Մատէն եկեղեցիին մէջ :

Բայց ի՞նչ էր Սիւլի Բրիւտտօի դերը Ֆրանսական բանաստեղծութեան մէջ :

Գեղարուեստատէր ընտանիքի մը զաւակ , Օլնէի , իր սիրուն բնավայրին մէջ Սիւլի Բրիւտտօ իր երիտասարդութիւնը անցուց Թէնի հետ : Այդ հրաշալի քննադատին զեղեցկադիմական ճաշակը ընդօրինակեց և մանաւանդ կրեց աւելնէն հմայիչ տղեկցութիւնը իր քրոջ Տիկին ժէպպօլլիի , որ Ռենանին քրոջը պէս իր խորհուրդներուն և զգայութիւններուն թեւաբերիչ եղաւ : Երջանիկ քոյրն էր որ ամէնէն

առաջ Խորսակուած Անօթը (Le Vase Brisé) լսեց , եաքէն լսելու համար նորէն լսելու այն թաղածոտ , եղերերգական բանաստեղծութիւնները , որոնց ծագումը գիտէր ինք եւ զորս իրեն կ'ուզէր իր բանաստեղծ եղբայրը :

Սիւլլի Բրիւտոմ քանդակեց տարեկան էր , երբ առաջին անգամ , 1865ին, Stances et Poèmesը հրատարակեց, բանաստեղծութիւններու գեղեցիկ հաւաքածոյ մը, որուն մէջ ամէնէն աւելի աչքի զարկաւ Խորսակուած Անօթը : Այդ չորս տունով պղտիկ բանաստեղծութիւնը՝ զաղափարի եւ զգայութեան ամենազօրաւոր արտայայտութիւնն էր : Սիւլլի Բրիւտոմ կը յայտնուէր իրր իմաստասէր բանաստեղծ մը , խորունկ մտածողութիւններով եւ նրբերանգ զգացումներով տողորուն : Բանաստեղծները , գրականութեան մէջ , ամէնէն անձնապաշտ , ամէնէն ետասէր անձերն են . միշտ իրենցմով զբաղիլ կը սիրեն . իրենց տառապանքները եւ իրենց համակրութիւնները կը բաժնեն ընթերցողներուն մէջ , այսպէս ստեղծելով եղբայրակցութիւն մը՝ որ իր հոգեբանական կարեւորութիւնը ունի անշուշտ : Սիւլլի Բրիւտոմ ա'յն բանաստեղծներէն էր՝ որոնց ցաւը օտար չպիտի թուէր ո'չ մէկուն . եւ որոնց ամբողջ սէրերուն խանդաղատանքովը պիտի ուզէին փայրայտել : Ոտանաւորներ ունի ան , որոնց մէջ կը զգացուի թէ խորհող մարդը աւելի հանձարեղ է զգացող մարդէն , եւ ոտանաւորներ ալ , որոնք փոխադարձաբար , սիրտին գերակայութեան ապացոյցը կուտան :

Իր բանաստեղծութիւնը , հակառակ խորունկ եւ բացարձակապէս իմաստասիրական ըլլալուն , գրեթէ միշտ ոճի եւ ձևի անաբգիւտ յօրինուածքով մը արտայայտուած է : Le Bonheurի յառաջաբանին մէջ սապէս կը պարզէ իր բանաստեղծական ըմբռնումը . «Իրաւացիօրէն , լոկ մէկ պայման կարեւոր է ոտանաւորին , երբե'ք տափակ չըլլալը : Ոտանաւորը արձակէն կը զանադանուէր չափականութիւնով : Տափակ ոտանաւոր մը ճշմարտապէս օտանաւոր չէ . որովհետեւ անոր մէջ զոյութիւն չունի ներգաշնակութիւնը , այն թեւաւոր ներգաշնակութիւնը՝ որ չսահմանուիր եւ որ չստացուիր : Բանաստեղծին պարտականութիւնն է՝ յղացումին յարմար ձևի գեղեցկութիւն մը տալ իր ոտանաւորներուն» : Այսպէս, Սիւլլի Բրիւտոմ , իր գաղափարային բանաստեղծութեան մէջ ա'յնքան բարձրութիւն եւ իմաստ մտցուց , որքան արուեստ ու անձնականութիւն դրած էին Ալպէր Սամէն եւ Շառլ Կէռէն՝ իրենց արուեստագիտական ու մանաւանդ զգացումի բանաստեղծութիւններուն մէջ : Շատ անգամ լրջութիւնը սոսկալի կերպով կը փնտէ բնածին , տաղանդաւոր քերթողի մը խոյանքներուն : Սիւլլի Բրիւտոմ ալ բացառութիւն կը կազմէ այս մասին : Իր մտածումները որ եւ է Բոբէրի մը կամ Ռէնյէի մը կողմէ արտայայտուած , ամբողջ իրենց լրջութեանը մէջ , ձանձրալի պիտի ըլլային : Le Bonheurի հեղինակը մասնագիտու-

թիւնը ունէր բանաստեղծութիւն ընկելու , լրջօրէ՛ն , առանց ձեքծեքութի , միտքի լերացումներուն տալով այն տեսակ փափուկ չնորհ մը , որ կը հրապուրէ , կը մագնիսացնէ :

«Բանաստեղծները մեզի կ'ըսեն այն բոլոր բաները՝ զորս մենք տարտամօրէն կը զգանք . անոնք մեր հոգիներուն ձայներն են» : Անո՛նք են որ մեր հեշտութիւններուն և մեր անձկութիւններուն գիտակցութիւնը կը ներշնչեն մեզի» : Անաթոլ Ֆրանս այսպէս կը գրէ Սիւլի Բրիւտոմի մասին : Բոլորովին մարդկային բանաստեղծ մը եղաւ ան . իր սկեպտիկութիւնը Նիշէի սկեպտիկութիւնը չէ . քաղցրութիւնով զծուն և բարութիւնով խառնուած , խորհրդաւոր պառնասեանութիւն մըն է , իր զէմքին պէս անուշ և ձայնին պէս փափուկ : Իր պաշտած գիտութիւնը երկւք չխաթարեց ի՛նչ որ ունէր զուտ բանաստեղծական և արուեստագիտական : Լուկրետիոսի Իրեյու Բևուքիւնը թարգմանելով էր որ իր մէջ զարգացաւ դասականութիւնը , այսինքն անթերիութիւնը , կատարելութիւնը : Այդ թարգմանութեան յառաջաքանին մէջ ինքզինքը յայտնեց իբր բնագիտութեան աշակերտ մը : Փիլիսոփայ ծնած էր , սակայն բանաստեղծութիւն կ'ընէր : Իր ըրած ճամբորդութիւններուն մէջ աւելի՛ ուսումնասիրեց դեղեցիկը : Ծովերուն լայնափնակ կլանները , լեռներուն գիծերը և ամպերուն երանգները խորհրդածել կուտային իրեն , այնպէս որ անոնցմէ հետեւութիւններ հանելով կը ստեղծէր ճշմարիտ բանաստեղծութիւնը : Առարկայի մը երեւոյթէն շա՛տ աւելի , իսկութիւնը , արժէ՛քն էր որ կը գրաւէր զինքը : Անո՛ր համար իր ոճին և բառերուն մարմաշային նրբութեանը տակ յաճախ դադափարնիր , խորունկ մտածումներ ծածկուած են : Տառապանքի ազդակները՝ որոնց արձագանգը եղած է ան , երբեք չունին Հայնէի եռականութիւնը և Վէլզէի կամ Պոպլէուի հեգնախառն զգայականութիւնը : Այդ տառապանքը՝ բանաստեղծին համար հեշտալի կ'երեւայ . և չէ՞ որ արդէն ինք գրած է տեղ մը . «J'ai souffert d'une forme charmante» :

Stances et Poèmes-էն ետքը՝ 1869ին Solitudesը կուգայ , գիրք մը որ ծայրէ ծայր իր միլամադձութեան , մարդկութեան ճշմարտապէս անկեղծ ցաւերուն ձայներովը կը թրթռայ : «Ու ան կը սիրէ իր ցաւը Գառնօղինի պէս» :

Epreuvesը [1866] ձայնակներու հաւաքածոյ մըն է , «հոգիի մը յաջորդական երազանքները , տարակոյսները , տառապանքները» պատկերացնող : Տեսակ մը ցաւի ծաղիկներ , որոնք փոխանակ հեշտախտիկ պարտէզի մը մէջ փթթելու , փիլիսոփայութեան բարձր վերնադասուններէն վար ինկած են : Destins [1872] դարձեալ իմաստասիրական տեսակէտով կը ներկայանայ . մարդուն յաւիտենապէս տուայտանքի ենթակայ եղած ըլլալուն պարագան , ինչո՛ւներու ախուր չարք մը , որ

տաւրի՝ կը զրգուէ հետաքրքրութիւնը որովհետեւներուն : 1875ին Vaines Tendressesը հրատարակեց , զրեթէ շարունակութիւնը իր առջի քերթուածներուն , անոնց չափ տառապագին և սիրտի միեւնոյն աղնուական ցաւերովը զաւարուն : Ունայն դգուանքներ : Justiceը [1878] իր ամէնէն վերացական քերթուածն է . անոնկ որ շատեր չափազանցութիւն նկատեցին Սիւլլի Բրիւտոմի այս ընթացքը , գիտական կամ վերացական խոկումներու այդ բանաստեղծական արտայայտութիւնը , շատերու աչքին , կը կորսնցնէր իր երկու համեմատական արժէքները : «Իմացական և զգայուն եղաւ անիկա» , ինչպէս կը վերջացնէ Անաթոլ Ֆրանս Սիւլլի Բրիւտոմի վրայ բրած իր գեղեցիկ ուսումնասիրութիւնը :

«Կը կարծեմ թէ , կը գրէ տեղ մը Սիւլլի Բրիւտոմ , քննադատ մը պիտի կրնայ բացատրել թուր ան թերութիւնները և քանի մը յատկութիւնները՝ որոնք իմ բանաստեղծութիւնս կը կազմեն՝ գիտութեան տուած համակրութիւնովս որ ինծի միշտ սիրելի դարձուցած է երեւակայութեան աւելի դատողութիւնը , գոյնէն աւելի արժէքը և փիլիսոփայութեան մասին ունեցած պաշտումովս՝ որնկարողութեանէն , պատմութեան աւելի վերլուծումը , քննախուզութիւնը սիրցնել կուտար ինծի » : Այս քանի մը տողերը սքանչելապէս կը բացատրեն իր մտքին հակումները : Իր առաջին բանաստեղծութիւններուն քիչ մը շատ իմացական չեւտէն ծնունդ տուած հանրութեան կարծիքը , զինքը համոզել տուին որ բանաստեղծութեան մէջ ամէնէն կարեւորը ձեւի և գոյնի գեղեցկագիտութիւնն է , երաժշտական հնչականութիւնը , բան մը զոր մեր գրողներէն շատեր ալ չեն հասկնար : Իր վերջին հրատարակութիւններուն մէջ եթէ Սիւլլի Բրիւտոմ չա՛տ աւելի խտտապահանջօրէն մտցուցած չլլար ճիգ մը գէպի գեղեցկագիտութիւն՝ պիտի չկրնար ըլլալ եղական քերթող մը : Իր մտածող ուժի գիտակցութիւնը չէր բաւեր իրեն . իր գանկին մէջ փոթորիկ մը կը զգար շարունակ , խորհածը և զգացածը չկարենալ արտագրելուն :

Que n'ai-je un peu de voix ! j'ai le cruel ennui
De sentir mon poème en ma poitrine éclore ,
Et de ne pouvoir pas , plus créateur encore ,
Comme j'ai mis mon cœur , mettre mon souffle en lui .

Այս ճիգը , բացատրել , յայտնուել ուղեւու այս մտահոգութիւնը կը քնատէր անչուշտ հանճարին : Աւելիին բաղձանքը՝ հիւանդագին , ջլախառնոր հօգիներուն արիւնը կը սպնէ , ուժը կը սպառէ :

«Ահ» բացադանչութիւնը , որուն շատ անգամ հանդիպած եմ Սիւլլի Բրիւտոմի գործին մէջ , ինծի Զապէլ Ետայեանի ա՛յնքան զգացումով անհրաժեշտ յիշեցնելէ վերջը , Les Fleursի հեղինակին ցաւին անկեղծութիւնը , տառապանքին խորութիւնը չեւտած է : Շատ քիչ բա-

նաստեղծներն այնքան անկեղծ եղած են, ա՛յնքան բարձր և միեւնոյն ատեն ա՛յնքան յուզիչ ըլլալով :

Հակառակ այն տարածայնութեան թէ՛ վէս նկարագրելով այդ մեծ բանաստեղծը երբեք թէ՛նամի չունեցաւ գրականութեան մէջ, սակայն Նոպէլի մրցանակին տիրանալուն վաղայաջորդ օրը իսկ նոր բանաստեղծներու խումբ մը ելաւ վարպետին դործը խմբծելու : Շառլ Մօսէս կը ծաղրէր զայն, ըսելով թէ «Պառու Լօւմիսն անոր պիտի սպասէ արքայա թեան դուսին առջեւ» : Ռէմի տը Կուլմօն իսկ, 1895ին, Նոպէլի մրցանակէն քանի մը տարիներ առաջ, ամէնէն աննպաստ տողերը կը նուիրէր Մեռֆիլսը Տը Ֆրանսի մէջ Սիւլլի Բրիւտտի : Միւս կողմէ, սակայն, Պառուէի պէս անհամեմատ կերպով անդուգական վիպագիր մը և կարող քննադատ մը, կը խորհէր. «Անոր ոտանաւորները պիտի պահեն նայուածքի մը և ձայնի մը հմայքը, — նայուածք մը ուր արցունքներ կը ծրածանին, ձայն մը որուն մէջ հեծեծանք մը կը դողդողայ» :

Անոր համար է որ ամբողջ իր դործը աղնուական մտահոգութեան մը զրոշմը կը կրէ : Լըքոնթ տը Լիլի գասական արուեստագիտութեան մէջ Սիւլլի Բրիւտտ հետզհետէ իր անթերի ու երաժշտական չափակաւորութիւնը և յստակութիւնը մոցուց : Պառնտուան Դպրոցը աւելի աւելի կ'աւարապնդուէր Stances et Poèmesի բանաստեղծին լուրջ ու եզակաւորէն հմայիչ արտադրութիւններովը : Սիւլլի Բրիւտտի ամէնէն ինքնատիւ արժանիքը կը կայանայ իմաստասիրական հարցերը բանաստեղծականացնելուն մէջ, ասիկա ամէն մարդ կը խոստովանի :

Իր գիրքերը ա՛յնքան բարձր են ժողովրդական ըլլալու համար : Հանրութիւնը Le Vase Briséն զատ ուրիշ քերթուած չգիտեր իրմէ : Իրաւ է որ Ֆրանսացիները չա՛տ քիչ ճանչցած են Սիւլլի Բրիւտտը. ընդհակառակը Անգլիացիները և Գերմանացիները և ուրիշ դարգացած ազգերու գրագէտները տող մը չեն վախցուցած և ամբողջ Սիւլլի Բրիւտտը դոց ըրած են : Ասիկա Ֆրանսացիներուն թեթեւամտութիւնը և բարիզեան սնապարծութիւնը կը տարրոյշէ : Նոպէլի մրցանակին տիրանալուն օրը, 1901ին, անխոհեմութիւնը ունեցաւ ինք ալ իր կողմէ մաս մը դրամ յատկացնելու իր երիտասարդ եղբայրակիցներուն : Նոպէլի մրցակիցին նպատակը աղքատ բանաստեղծները կշտացնելու չէր ծառայեր ընաւ. կ'ուզէր պահել մարդկային հանճարը, բանաստեղծութիւնը : Սիւլլի Բրիւտտ զղջաց սակայն և օրագիրներուն ուղղեց նամակ մը՝ որուն մէջ կը գրէր թէ վայրկեան մը հանգիստ չկրնար ըլլալ : Գաւառներէն, Բարիզէն իրեն կը երկայանային անթիւ բանաստեղծներ, իրենց անութիւն տակ ոտանաւորներու հաւաքածոներ ղետեղած : Ո՛րը չերամին վրայ դրած էր, ո՛րը դորտերուն վրայ : Սիւլլի Բրիւտտ միւքէն չէր անցուցած թէ բանաստեղծութիւնը Ֆրանս-

այսի մէջ ա՛յդքան այլանդակ ձեռնասուններ ունի : «Այդ մարդերը իրեն կը ներկայանային պահանջատէրներու պէս : Ու կը զարմանային որ ամսուան մը մէջ զեռ մրցանակը չէ բաժնուած իրենց մէջ» :

Սիւլլի Բրիւտոմ կ'ուզէր քանաստեղծօրէն ապրիլ, իբր թէ Լամարթինի կամ Վէուլէնի ճակատագիրը աւելի չողջողուն եղած ըլլային : Ֆրէտէրիք Բասսի , որուն տրուեցաւ երկրորդ մրցանակը իբր իմաստասէր տնտեսագէտ մը , եթէ Սիւլլի Բրիւտոմի յայտարարութիւնը ընէր , Ֆիկլառօի ըսածին պէս , այն տաւն հաւանաբար տառնըութէն քսան տարեկան ազաճներ ինքզինքին իբր փիլիսոփայ պիտի ներկայացնէին :

Սիւլլի Բրիւտոմի կտակը Բարիզի մէջ բացուելով , իր բարեկամներուն և սպասաւորներուն յատկացուցած զբաժներէն զատ , տեսնուեցաւ որ՝ Ֆրանսական Ակադեմիին կտակած է 100,000 Ֆրանքի դու-մար մը , որուն տոկոսը զբաղանութեան զարգացումին նպաստող գործերու պիտի ծառայէ : Սիւլլի Բրիւտոմ 50,000 Ֆրանք ալ Օկիւպ-Տորչէնի , Պէւնու Տէրոնի , Օր. Շնէցէրի և ուրիշ երկու հոգիներու կտակած է : Այս անգամ իր հոգին չպիտի վրդովնն ընաւ , բոլոր այն գրողի պիտակով անհանշուրժելի ոչնչութիւնները , որոնք կը վիստան ամէն անդ սովորաբար :

* *

Յօդուածս վերջանելու պահուն , կը խորհիմ թէ տպագրութիւնս ներս իրենց արմկանարող , աճապարոտ իրերայաջորդութիւնովը չա՛տ տարտամ դաղափար մը հաղիւ պիտի կրնան տալ Սիւլլի Բրիւտոմի վրայ : Առաջադրել կը թելադրուիմ Պառնասեան նշանաւոր բանաստեղծին ամէնէն աղուոր ոտանաւորները հայացնել : Այդ թարգմանութիւնները , վստահ եմ , չա՛տ աւելի բարձրօրէն պիտի ճանչցնեն տաղանդը ա՛յն փափուկ բանաստեղծին , որուն մահուան սուղը կ'ողբայ ամբողջ եւրոպական Մամուլը :

ՄԵՐՈՒԺԱՆ ՊԱՐՍՍՄԵԱՆ

ՊՈՒՆԻՒՄ ԿՈՒՄՈՒՄ

Բաժանորդագրութեան նկատ իբր ձրի նուէր տառայու պայմանաւա-մը կրացած ըլլալով , և միւս կող-մէ մեծ ինքզանք ըլլալով զայն բո-ցառիկ վճարումով գնելու , գոնա-ցում տալու համար ոչ-բաժանորդ-ներէ և ուրիշներէ եղած ինքզանք-ներուն , պէտք կը տեսնենք նաև ձեռքէ փաճաւելու , չգրկու հա-մարող գեղարուեստագէտները՝ **ՄԱ-ՍԻՍԻ** Ալգոմը ունենալու իրենց հա-ճութիւն : Կը ծանուցանենք հետե-ւարորդ՝ զայն կրնան ստանալ **Կանթիկ** վճարելով անոր փոխար-ժէքը, 20 դր., Թղթատարի ծախ-քով 92 :

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՂԱՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵ

Հանդիմ կը կարգաւ Մանգրումի՝ Մարիսի , ուղղած **ԽԵՑԻՆԵԱՎ** գնահատականը . — Ուրախ ենք որ **Մասիս** լրովին կը գոնանէ ընթերցաւոր հանրու-թեան գրական ճաշակը իր ճոխ և ջղուտ նրբեմունտ պարունակութեամբ , և ամէն շաբթու գնահատա-կաներ կը հասնին խմբագրութեան հասցէին :

ԳԻՏՈՒԹԻՒՆԸ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Սիւլլի Բրիւտտի մահովը կ'անհետանայ նաեւ սա անլուծելի նկատուած հարցը թէ՛ կարելի՞ է որ Գիտութիւնը մաս կազմէ Բանաստեղծութեան, կամ ուրիշ բացատրութեամբ, դիւրին է որ մարդկային զգացումները, արդւութիւնները գիտականօրէն բանաստեղծութիւն ու հոգեբանութիւն : «Բեկեալ Անօթ»ին հեղինակը, իր կեանքին երազը, ըրաւ այս հարցը երկար ատեն, բայց չենք կրնար ըսել թէ այս խնդիրը մինչեւ հիմա հաստատական լուծումի մը յանգած ըլլայ :

Կը պատմեն թէ՛ գիշեր մը Պերթլօ գիտունը, որ Վիքթոր Իւկօի աստղագիտութեան դասեր կուտար ճաշի տանն, սեղանին վրայ, հարցնէ իր աշակերտին թէ աղէկ մը ըմբռնած էր ըստածները : Էռնեստին մեծանուն հեղինակը կը պատասխանէ ժպտելով .

— Սքանչելի կերպով կը հասկնամ, կ'ըմբռնեմ . միայն թէ, սիրելի Տիար Պերթլօ, ըսէիք ինծի թէ ո՛ւր մնաց լուսաւորներուն հոգին : Հոգի՛ն, բանաստեղծին ամէն բանի մէջ փնտռած, հետապնդած նիւթը որուն գիտութիւնը պիտի չսովբեցնէր բնաւ ուր ըլլալը : Այս պատճառով է թերեւ որ բանաստեղծները և գրական մարդիկ հաւասարադէս, բնութեան գեղեցկութիւնները և հմայքները նկարագրելու իրենց ֆանքերուն մէջ, չեն մոռնար կամ կը մղուն տալու անոնց, մարդկային նմանողութիւններ և կամ կը ստիպուն զանոնք անհատականացնել (personnifier), մարդայնաստել խորհուրդներ և դատողութիւններ վերագրելով անոնց :

Այս փորձին մէջ մասնաւոր ու շահեկան դեր մը կը կատարէ այս պահուս պելճ բանաստեղծը Մէթէրլէնկ, որ միջոց մը հեռանալով Սենյօղիզնէն [գրաշար, ուշնորութիւն, «ս»ով չըսեալ] կը ձգտի իր տաղանդին բոլոր ուժովը և հմայքովը խնդիր ընել, հետեւելով Սիւլլի Բրիւտտի, Գիտութեան՝ Բանաստեղծութեան հետ կապակցուելու հարցը : Իր մէկ տարուան շրջանին մէջ հրատարակած երկու գիրքերը, — Մեղունեւորն կեանքը և Ծաղիկներուն Իմացականութիւնը [*], — յաջող ու հետաքրքրական նմայչները ըլլալ կը թուին իր դաւանած բանաստեղծական սեպին : Ընթերցողը, առաջին տպաւորութեան տակ, պիտի կարծէ թէ այս հատորները տրդիւնքը եղած ըլլան արուեստասէրի (dilettante) մը քմայքոտ երեւակայութեան . իսկ գրական մարդիկ աւելի լերկ ու չոր պիտի գտնեն անոնց նիւթը, այն հաւատքով որ բանաստեղծելու համար աւանուած գիտութիւնը չկրնար ամբողջացուցիչ մաս մը կազմել : Գալով գիտուններուն, անոնք ալ պիտի ժպտին խորհելով թէ՛ ինչպէ՞ս կ'ըլլայ որ բանաստեղծ մը իրենց ճանչ-

[*] Այս մասին յաջորդ Թիւով մը :

ցած , ուսումնասիրած նիւթերուն վրայ համարձակի ճառել ու քնարերգել : Թերեւս միայն գեղեցկութեան սիրահարները խորասուզուին Մէթէրլէնկի հեշտայոյզ էջերուն մէջ և օրօրուն անոր տաւիղին թելերուն դաշներգութիւնէն :

Բայց թէ ո՞ր աստիճան շահեկանութիւն կուտան բուն գիտական մարդիկ Մէթէրլէնկի երկու հատորներուն ոգիին և հետեւաբար գիտութիւնը բանաստեղծութեան հետ միացնելու իր նպատակին , ահա այս կարեւոր կէտն է զոր նկատողութեան առած է Բարիզի Գիտութեանց Ակադեմիի համալսարանի անդամ Կառլօն Պօնիէ : Իր այս առիթով գրած հսկայ մէկ ուսումնասիրութեան հետեւելով , պիտի պարզենք ուրեմն հոս այս խնդիրին վրայ կարգ մը շահեկան երեւոյթներ : Առաջին հարցումը ուս պէտք է ըլլայ թէ՛ գիտական ո՞ր աստիճան վաւերական հեղինակութիւններու վրայ հիմնուելով է որ հուժկու բանաստեղծը կրցած է գրել իր երկու բանաստեղծական գիրքերը :

Արդ , Կառլօն Պօնիէի համաձայն , այն գիտական նիւթերը որոնց տկնարկած է Մէթէրլէնկ և անոնցմէ ու զգուած , բոլորովին երկրորդական և առանց ճշմարիտ արժէքի ժողովրդական բամբակյուսին ծառայող գիրքեր են , բայց անուրանալի է որ Մեղունեռու Կեանքին մէջ , հեղինակը յաճախ գիտական մարդու մը ինքնայղացումով կը յաջողի փեթակի մը ներքինը քննել , նկարագրել , մեղուները դասակարգել իրենց աշխատութեան չափով , իրենց յարաբերական շարժումներուն մէջ և խորապէս բանաստեղծել այն ծաղիկի շերտին վրայ , որ կը տարբարւծուի , կ'անէանայ անոնց յաջորդական և արագ բոլորումներուն տակ : Այս պարագային , իր բանաստեղծի սպաւորութիւնները աւելի կենդանի են և իր դատողութիւնները աւելի խորունկ՝ քան երբ գիտական այդ անկարեւոր գիրքերէն քաղուած դէպքերը կը նկրտի վերլուծել ոսկեզպար սերձանքներով : Իրաւ է որ , Մէթէրլէնկ բնութեան մէջ ամէն նիւթ , ամէն առարկայ իր վախճանին մէջ չէ որ կը ջանայ ցուցադրել , ամէն մէկուն որոշ պաշտօնը , գերը իր իսկութեան մէջ նկարագրելով : Գիտական հիմերով բանաստեղծութեան մը մէջ , ծիծաղելի պիտի ըլլար ըսելը թէ ճակնդեղը չաքար կը հայթայթէ մեր սուրճին համար , թէ վայրի բագերը եղած են ոլոռնով ուտուելու համար : Ասոնք finaliste կոչուած գիտական միտքերու գրիչին կրնան վայել , ինչպէս Պէռնարտէն աը Սէն-Բիէսի մը , որ իր Պոդրու եւ Վերգիւնիին մէջ տղայամտաբար գրած է կարգ մը պտուղներուն ինչպէս ուտուելուն ծանօթ և սովորական կերպին վրայ . սակայն Մէթէրլէնկի մէջ տարբեր վախճանութեան մը (finalisme) դրոշմ կայ , այն՝ որուն կ'առաջնորդեն Տարուինի սկզբունքները և որ կարգ մը փոխաբերական գաղափարներու դէմ կ'ուսելու պատրուակին տակ , տարբեր բառերով , տարբեր բացատրութիւններով վերածուած է գիտութեան մը որ կը հե-

ռանայ մեծ մարդարանին եզրակացութիւններէն , փոխանակ անոնց մօտենալու , հաւասարելու :

Կարելի չէ անշուշտ լրջաբար պահանջել բանաստեղծէ մը որ ասկէ աւելի հմտացած ըլլայ , սակայն կրնանք ըսել թէ՛ անիկա ունենալու էր ոչ միայն գիտական մարդու մը փորձառութիւնը , այլ նաեւ ոգին այն խորունկ քննադատութեան , որմէ զուրկ են կարգ մը գիտուններ իսկ և որ պիտի կրնար հայթայթել իրեն , իր փնտռութիւններուն և հետապնդումներուն մէջ արամախօսական ընտրութիւն մը :

Տեսնենք թէ ի՞նչ կ'արժէ հիմա Մէթէրլէնկի բանաստեղծական այն ձեւը՝ որ ընթերցողը կը հրապուրէ և զոր գիտնականը կը դաւանի յաճախ անօգուտ :

Մէթէրլէնկ սա կերպով նկարագրած է Ծաղիկներու Իմացականութիւնը գիրքին մէջ «*Վեկիւսեան Վարս*» կոչուած տունկը. — «Ծաղիկը ծնելուն պէս , իր գլխապսակին եզերքը մէկտեղ հաւաքուած կը կենան երկարատեւ հինգ էգ թերթիկներ , կանանչ չըջազգեստով պծնուած իշխանուհիներու պէս շքեղ ու սխրահաւիլ : Իրենց շուրջը , յուսահատ սիրահարներու նման կը խոնարհին արու թերթիկները , առկաւին անկարող մինչև անոնց ծունկերը բարձրանալու : Այն ատեն , Սափիրայի ու Փերուզակի այդ դրախտին ծոցը , ամառուան օրերու երանութեանը մէջ , կը սկսի արամիրգութիւնը անբարբառ և անխափաճան սիրոյ մը , զոր կարելի է գուշակել իրենց անշարժ և անխռով սպասումէն : Եւ կը սահին օրերը որոնք տարիներ են ծաղիկին համար , որ հետզհետէ կը կորսնցնէ իրօք իր փայլը : Թերթիկները կը բաժնուին իրարմէ , իրենց պարծանքը , հպարտանքը կեանքի ծանրութեան տակ կը թուի կքլի և իւր թէ ներքին անգիմաղրելի և դադոնախորհուրդ հրամանի մը տակ , յանկարծապէս , կանոնաւոր շարժումով մը , նման աւաղանին մէջ հինգ բերաններէ դուրս արձակուած քաղցրանուագ ջուրի մը պոթկումին , ամէնքը մէկ , մէկ կողմին վրայ կը հակին կ'իյնան և կուգան շնորհալիօրէն քաղել , իրենց խոնարհ սիրահարներու շրթունքներէն , հարստնեկան համբոյրին ոսկեփայլ փռին» :

Այս օրինակը , պատահմամբ քաղուած , որ ոչ նուազ գեղեցիկներէն է գիրքին , յստակօրէն կը ցուցնէ թէ՛ Մէթէրլէնկի բանաստեղծելու կերպը չէ կրցած իրականանալ առանց մարդկային նմանութիւններու և զգացումներու արտայայտութեան : Էգ թերթիկները իշխանուհիներու նմանցուած են և իրենց մէջքերը ծունգերու վերածուած : Յետոյ , հարկ տեսնուած է որ բանաստեղծը անբարբառ արամիրգութիւն մը երեւակայէ եղածին մէջ և արու թերթիկներու վերագրէ անվերջանալի սպառումի և դալկացումի մը վիշտը : Ասոնք բոլորն ալ գեղեցիկ երեւակայութեան մը ցոլքերն են բանաստեղծի մը համար , բայց գիտական չեն , գիտականօրէն վերլուծուած չեն : Մնաց որ , Մէ-

թէրէնկ իր Մեղրուներուն կեանքին մէջ աւելի զբաղած է մարդկային նմանողութիւններով և բնական է որ այսպէս պիտի ընէր , քանի որ միջամանրուն զգայնութիւնները զգալապէս մօտ են մերկններուն , քան թէ բոյսերուն զգայնութիւնները : Բայց այս կերպով ալ բանաստեղծը աւելի ենթակայ եղած կը թուի սխալանքի փորձութեան , որքան չէ եղած ծաղիկներու վրայ բանաստեղծած տառն : Այսպէս , տեղ մը կը գրէ . — «Առաւ մը , պատահեցաւ որ մեղուներու իսաղալիկ բնակարանին մէջ , յանկարծ , իրը թէ փոթորիկի մը ալիքեցութեան տակ , ընդհանուր փոփոխութիւն մը ըլլայ և հանդարտօրէն աշխատող գործաւորութիւնները խիստ ու խռովանքի ենթարկուած դէմքեր տունն : Կարելի չէ գուշակել թէ ինչպէ՞ս և ինչո՞ւ այս փոփոխութիւնը առաջ կուգար , իրենց դատող և անհազորդ իմացականութիւնէն արդեօք , թէ ոչ ներքին անհասկնալի գաղտնիքէ մը : Ո՛վ գիտէ , ճակատագիրին ի՞նչ զառն մէկ քմայքն էր ապա՞ որ վայրկեանական տպաւորութեան մը տակ կ'ընկճէր ու կը յուզէր չէ՞ր մեղուները , որոնց սիրեակը գրաւուեցան և համակուեցան անդիմադրելի վախով մը » :

Մեղուներուն սիրեակը . — Ահա կ'ըսէ Կաթմօն Պօնիէ հեղինանքով , ճշմարիտ դժուարութիւնը բաղձացուած գործին , որովհետեւ մեղուները սիրտ չունին . իրենց սիրտը սղնային այն նեղ անօթն է , որ հզօր յուզումներու ատեն մարդկային սիրտերու պէս չպիտի բարձրէր : Աւելի գիտականօրէն բանաստեղծելու համար , Մէթէրլէնկ ըսելու էր թէ՛ տեղի ունեցած փոփոխութիւնը երկեւորով լեցուց մեղուներուն «նոյնային անօրները» : Կրնար ըսուիլ նաեւ թէ . — «Երբ մայր-մեղուն դուրս թռաւ փնթակէն , իր թռքերը լեցուեցան մաքուր օդով , բայց մեղուները թռք ալ չունին և եթէ հեղինակը փորձուէր , ճիշդ գիտական բառերը գործածելու համար , գրելու էր թէ «դուրսի մաքուր օդը լեցուց մայր-մեղունին «որոպայնային շնչածակեր»ը : Օ՛հ , երթա՛յ բարով այն ատեն բանաստեղծութիւնը :

Եւ ճիշդ այս պարագաներուն մէջն է որ՝ գիտական հիմերով բանաստեղծութիւնը մեռեալ տառ մը կը հանդիսանայ : Ի՞նչ պէտք է ըլլուի ուրեմն որ ընդունելի ըլլայ . արդեօք հեղինակ և ընթերցող չա՞նք ընելու են նկատողութեան չառնելու գիտական այն կարգ մը բացատրութիւնները որոնց բանաստեղծական իմաստները գոյութիւն չունին դեռ : Որքան դժուար խնդիր : Երբ մարդ էակը դիտելու ըլլայ լուսինը , կրնա՞յ երեւակայել հոն լուսնային կոյտ մը , փոխանակ կարծեցեալ մարդկային լուսավառ դէմքին : Հետեւաբար ծաղիկները և մեղուները նկարագրելու համար պէտք է հնարել ներդաշնակ և հնչուն բառերու , իմաստներու ճօն միջերդ մը , որ առնչութիւն չունենայ մարդկային և ընտանեկան առարկաներու հետ , բայց տառնիկով ալ ամէն բան անհասկնալի պիտի ըլլար մինչև որ երկար տարիներ մարդիկ վարժուէին

անոնց և ընտելանային : Բայց ասանկ լեզու մը ստեղծելն ալ դիւրին չէ : Էսքեռանթոն կամ Վօլաքիւֆը անգամ չսիրտի բաւէին այս տեսակ գրական մարդանքի մը : Անկարելիին է որ կը բազմինք ուրեմն և պէտք է խորհիլ գործելէ առաջ :

*
* *

Կէօթէ դիտութեան կը հետեւէր , բայց ա՛ն տտեն՝ երբ կը դադրէր բանաստեղծելէ . իրարու հետ զանոնք հաշտեցնելու ջանք չէր արած : Ծաղիկներու կամ երանգներու կերպարանափոխութիւնք նկարագրած ատեն , Բուսականութեան և Բնագիտութեան կ'առաջնորդուէր : Միչլէ ալ ասանկ ըրած է , իր Թուշուքը գիրքը գրելով : Բնաւ գիտութեան չէ զիմած , այլ բանաստեղծութիւն ըրած է միայն հոն : Այս կերպն է առաւելագոյն Մէթէրլէնկի ըրածը , բայց Կէօթէին ալ նմանելէ չէ խուսափած , որովհետեւ իր գիրքերուն մէջ , հոն ուր միմիայն բանաստեղծութեամբ սիրտի կարոնար նկարագրել իր ըսելիքները , յանկարծ կը փոխէ ոճը և կը շարունակէ բացատրել զուտ գիտական բառերով , որոշ և պարզ բառերով :

Մէթէրլէնկ , Բնութեան վրայ ունեցած սքանչապումէն արբելու , բազմապատկեան դրած է յաճախ մարդոց զգացումները և իմացականութիւնը , մեղունքներուն և ծաղիկներուն իմացականութեան հետ : Այս մասին , Մէթէրլէնկ սխալ դատաստան մը կ'ընէ , ինչու որ կենդանիներու իմացականութիւնը բառական իմաստով կը նշանակէ իրենց բնազդական և սկիզբէն ի վեր միօրինակ հիմի մը վրայ գործող կարողութիւնը , մինչդեռ մարդուն համար նոյն բառը կը նշանակէ անոր միտքին մասնաւոր և անհատական յատկութիւնները՝ որոնք ամէն գլխու մէջ նոյն ուժը և մեծութիւնը չունին : Բանաստեղծին բազմապատկեան դրութիւնը ուրեմն ճիշդ չէ :

— «Կը տեսնենք որ , կը գրէ , ծաղիկները օրինակ կ'ըլլան մարդոց հեղութեան , յարատեւութեան և բարեկեցութեան տեսակէտներով . հետեւաբար , եթէ մարդիկ ալ դրած ըլլային իրենց կեանքին մէջ զոնէ կէսը այն կորովին , զոր այս կամ այն բոյսը կը դնէ իր կեանքի շրջանին մէջ , շատ հաւանական է որ սիրտի կարենային խոյս տալ մասամբ վիշտերու , ծերութեան և մահուան վաղաժամ պատուհաններէն և մարդու ճակատագիրը թերեւս բոլորովին տարբեր ըլլար եղածէն» : Ուրիշ տեղ մը կ'եզրակացնէ . — «Անգամ մըն ալ կարելի է հաստատել թէ՛ հանճարը բնութեան , կամ կեանքին և կամ ցեղի մը յատուկ կրնայ ըլլալ , անհատ մը ինքնին տխմար մըն է գրեթէ» :

Բանաստեղծը սակայն չգոհանար այս փիլիսոփայական վարկածներով . իր ուղածը բանաստեղծել է լոկ , գիտական հիմերու վրայ՝ զորս չկրնար ամբողջացնել , թէև կը հաւատայ թէ բոլոր բնութեան հիւլէ-

ները, ցեղականութիւնը և բնագրտական փորձերը գրական զարգացումին չեն կրնար ծառայել և գլուխը վար, կը նետուի գեղաչէն քնարերգական բառերու և խնամատալից բացատրութիւններու հոսանքին մէջ։ Արդ, երբ Գիտութիւնը կը շփոթուի և անլուծելի վիճակ մը կը ստանայ Բանաստեղծութեան հետ հաղորդուելուն միջոցին, փիլիսոփան կը ստիպուի փարիլ անկարելիին և դիտունէ մը աւելի զիւրութեամբ, հմայիչ ձևի մը տակ, կը սկսի բացատրել մեզ անոր բոլոր խորունկութիւնը :

Եղբակացնելով բոլոր այս գիտական հայեացքները, կրնա՞յ ըսուիլ թէ՛ Բանաստեղծութեան միացումը Գիտութեան հետ գծուար խնդիր մըն է և թէ ամէն բանաստեղծի գործը չէ անոր լուծումը փորձել : Գիտական երեւոյթները և եղելութիւնները չեն արդէն որ պիտի կարենային օժանդակել Բանաստեղծութեան բարեշրջումին և զարգացումին : Այդ երեւոյթները գրական լեզուով ալ չեն կրնար արտայայտուիլ և անոնցմէ դուրս կրնան գալ միայն ընդհանուր ազաւորութիւններ, բանաստեղծօրէն նկարագրելի :

Մնաց որ, բանաստեղծին ղերը կը կայանայ իսկապէս, իր ոճին մոգականութիւնովը և իր ազանդէին հմայքներովը հաղորդելուն մէջ մեզի իր զգայնութիւններուն և իր ազաւորութիւններուն բոլոր զիւրութանքը : Բնական է որ, այս զգայնութիւնները և ազաւորութիւնները աւելի հեշտ ու խորաթափանց պիտի ըլլան, եթէ կարենայ ճարտարօրէն և հեղինակօրէն կոչում ընել Գիտութեան, իւր օգնական ուժ մը երեւակայութեան բաղմոզան ու խորախորհուրդ տեսիլքներուն : Այլապէս, պէտք է միայն բանաստեղծ մնալ և երգել ընտելեան հրաշալիքները :

ՏՕՒՆՕ

Գ Տ Ն ՈՒ Ա Մ

Անստ գացի ես
Անգամ մը պնայէս,
Բան մը փրցնուէ
Ձեր անցներ միսէս :

Շուին մէջ տեսայ
Ինչպիսի մը ծրած
Աչքի պէս սիրուն,
Փայլու : լիսն պրտակ :

Քաղիլ ուզեցի,
Բայց բառ մեղմիկ .
«Պիսի բռնիմ ես
Եթէ փրցնես» :

Ամենով ամբողջ
Հանցի գայն ողջ .
Հէքս սարի ռուն,
Պարեգըս սիրուն :

Ապամով տեղ մը
Տրեկեցի կրկին .
Ինչպիսի, ընծիւղներ
Արդ միտս կը ծաղկին :

ԿԵՕԹԷ

Թարգմ. ՄԵԼԻՔ ԹԷՎԷԲԷԼ

ԱԼԵՔՍԱՆՏՐ ՏԻԻՄԱ ՈՐԴԻ

[ԳՐԱՆՈՒՆ ԲՈՒՍՈՒՄՆԵՍԱՍԻՐՈՒԹԻՒՆ]

Ա. — Կ Ե Ա Ն Ք Ը

1850-էն 1859, տաղանդաւոր դրագէտը արտասովոր բեղնաւորութիւն մը ցուցուց : Վէպեր, նորավէպեր կը գրէր և յաջորդաբար խաղեր կը հայթայթէր թատրոնին, ինչպէս Diane de Lys, Կիսաշխարհը, որ իր հրաշակերաններէն մէկն է, Դրամի Խնդիրը, Ապօրէն Զաւակը, Անառակ Հայրը : Այդ շրջանին շատ կ'աշխատէր, առաւուան ժամը վեցէն մինչև իրիկուան չորսը-հինգը, և տաղակալի այցելութիւններէ չնեղուելու համար, պզտիկ տուն մը վարձած էր ուր ածու մը կար, երեք եղբեւաններով և որթատունկով մը : Օր մը հայրը տեսնելու եկաւ զինքը : Ամառ էր : Որոշեցին բացօթեայ ճաշել : Յանկարծ, կը պատմէ Տիւմա Որդի, տեսայ որ հայրս ելաւ սեղանէն, և, ինծի ցուցնելով ճաշասրահը, որ պարտէզին հետ միեւնոյ՝ յարկին վրայ կը դանուէր, ըսաւ .

— Ալեքսանտր, տունին դուռը բաց որ օդ մտնէ պարտէզը :

Տիւմա Որդի մտաւորական զարհուրելի խոնջէնքի մը ենթարկած էր ինքզինքը, երբ, 1859ին, ամուսնացաւ Տիկին Նարեչքինի հետ : Շատ չանցած ջղային ծանր հիւանդութենէ մը բռնուելով, Իտալիա գնաց 1860ին : Իէձի մէջ էր որ ծնաւ իր աղջիկը, Քօլէշը : Անկէ Նաբոլի գնաց, ուր կը բնակէր իր հայրը, Կարիպալտիի հետ պատերազմի երթալէ ետքը : Քիչ վերջը մօլեգնութեան ճշմարիտնպայէ մը բռնուեցաւ : Կը պատմեն թէ ծուկի եկած էր իր սենեակին մէջանդը, և բացարձակապէս կը մերժէր ոտքի ելլել : Ինչ որ կրցան հասկնալ իր բերնէն, սա էր թէ հայրը կը խորդար յարակից սենեակի մը մէջ և թէ այդ խորդումը քստմնելի ազգեցութիւն մը գործած էր իր ջիւղերուն վրայ : Այն ատեն հայրը սպաննելու մտածում մը ունեցած էր, և միայն ծուկի դալով կրցած էր դիմադրել այդ հրէշային թեւադրութեան : Գրեթէ տարի մը չկրցաւ դանել ինքզինքը : Վերջապէս հաւատարակչութիւնը վերահաստատուեցաւ աստիճանաբար, և, խորհրդազգածութեան տագնապէ մը ետքը, բոլորովին առողջացաւ : Անկէ ետքը ա'լ չհիւանդացաւ :

Երկարատեւ հանգիստէ մը ետքը, Տիւմա ներկայացուց Կիներուն Բարեկիւրը [1864] : Այս թատերախաղը, որուն մէջ իր սեփական գաղափարները տուած էր գլխաւոր անձնաւորութեան, բուն քննադատութիւններու առարկայ դարձած ըլլալով, հեղինակը երգում ըրաւ.

ա'լ թատերախաղ չգրել : Բայց չպահանջ այս երգումը : Այդ չըջանին էմիլ տը Ժիւստաւտէն իրեն ցուցուց ձեռագիրը կատակերգութեան մը , որուն տիտղոսն էր Կնոջ մը Չարչարանքը : Տիւմա ծայրէ ծայր նորէն գրեց զայն : Ժիւստաւտէն տեսնելով որ իր գործը լոյս տեսնուած չէր , ստատիկ զայրացաւ և չուզեց ստորագրել զայն : Տիւմա ալ այնպէս ըրաւ : Երկու բարեկամները ամէն յարաբերութիւն խզեցին , մինչ Կնոջ մը Չարչարանքը , որ առանց հեղինակի ներկայացուած էր Քօմէտի Ֆրանսէզին մէջ , փայլուն յաջողութիւն մը կը շահէր : Տիւմա , հակառակ այս ձախորդութեան , վերջապէս հաւանեցաւ Ժիւստաւտէն համար նորէն գրել Տիւստաւտէնի մէկ թատերախաղը որ իրեն յանձնուած էր աչքէ անցընելու համար : Մասնուսպէկ տիւ Պոէոյ , որ էջօիգ Բառանքի վերածուած էր , ներկայացուեցաւ 1866ին և ջերմ ծափեր խեց : Տիւստաւտէն , սկզբնական հեղինակը , երբեք չ'ներեց Տիւմայի այս արարքը : Աւելցանար Տիւմա յետոյ գրեց իր վէպերուն ամէնէն նշանաւորը՝ Գաւեռիազարդ Տիկինէն ետքը : Այս գործը , որ փիլիսոփայական և ընկերային հանգամանք ունի , հետաքրքրական է մտնաւանդ անոր համար որ անոր մէջ ինքնակենսագրական ծանօթութիւններ կը գտնուին վիպագիրին երիտասարդութեան մասին : Գիրքին անունն է L'Affaire Clémenceau, որ հրատարակ ելաւ 1866ին : Յաջորդ տարին ներկայացնել տուաւ իր ամէնէն յանդուգն թատերախաղերէն մէկը , Les Idées de Madame Aubray . 1868ին սկսաւ հրատարակել իր թատերական գործերուն ամբողջական շարքը , եղականապէս թելադրիչ և խիստ հետաքրքրական յառաջարկներով , և 1869ին , գրեց Le Filleul de Compignace , կատակերգութիւն մը , որուն աշխատակցած էր ուրիշ մըն ալ : 1868ին Տիւմա կորսնցուց մայրը : Ինք ամէն բարեկեցութիւն ապահոված էր անոր և ջանացած էր բազմաւորել անոր վերջին օրերը : Միեւնոյնը ըրաւ հօրը համար , զոր միշտ սիրած էր ջերմապէս : 1870ի պատերազմին տոտեն , Տիւմա Ուրդի քաջուած էր հեռուոր կալուած մը , Տիէրի մօտ , ուր 1870 դեկտ. 5ին հօգին տւանդեց Տիւմա Հայր չըջապատուած ամէնէն խանդաղատալից և ամէնէն գործովալի խնամքներով , միշտ մղտուն , սակայն հանգիստի սաստիկ պէտքէ մը բռնուած : Յատկանշական խօսք մը ունի այս հանձարեղ մարդը : Մահուընէն քանի մը օր առաջ , կատակելով ըսաւ մարդու մը՝ որ իրեն այցելութեան եկած էր .

— Կ'ըսեն թէ ես չ'ալլ եմ : Ինչ զարմանալի գաղափար մը : Քան տարեկանին կեանքի ասպարէզը նետուեցայ քան ֆրանքով : Լա'ւ . տեսէ՛ք , յարեց երկու ոսկեգրամ հանելով գրպանէն , հիմա երկու նաբօլէոն ունիմ :

Այդ մենարանին մէջ էր որ Տիւմա Որդի , որ անձկութեամբ կը հետեւէր պատերազմի աղէտներուն , գրեց Nouvelle Lettre de Junius à Son Ami A. D. ն , Հետաքրքրական եւ Իրական Յայտնութիւններ Արդի Պատերազմին Գլխաւոր Անձնաւորութեանց վրայ [1870] :

Տարի մը վերջը , նամակ մը հրատարակեց Օրոշան Խնդիրներուն վրայ , որուն մէջ անխնայ կը դատապարտէր նոր գրական գաղափարներու ջատագովները : Այս գրքոյէն վերջը Նոր Նախակ մը հրատարակեց , որ գրեթէ աննշմար անցաւ : Այդ շրջանէն սկսած , տեսակ մը փիլիսոփայական մտազրադում , գէպ ի միտքի քականդութիւն ձգտում մը , ընկերային խնդիրներու մասնաւոր ուսումնասիրութիւն մը կը դիտուի իր արտադրութիւններուն մէջ : 1871էն մինչեւ 1876 չորս նոր թատերախաղեր գրած էր : Դարձեալ այդ միջոցներուն էր որ հրատարակեց իր համբաւաւոր տետրակը , Մարդ-Կինը (L'Homme-Femme) , ուր մոլեկան խտութիւն մը կը ցուցնէ խաբող կնոջ համար և զոր կը վերջացնէ սա նշանաւոր բառերով . «Սպաննէ՛ զայն» , այսինքն խաբող կինը : 1874ին Տիւմա Որդի անդամ ընտրուեցաւ Ֆրանսական Ակադեմիին , յաջորդելով Բիէս Լըպուէօնի : Վերջոյ Ի կօ , որ շատոնց քաջուած էր Ակադեմիին , այդ օրը մասնաւորապէս գնաց իրեն քուէ տալու համար : Իր ընդունելութեան ճառին մէջ զոր խօսեցաւ 1875ին , Տիւմա ինքզինքը պաշտպանեց ինկած կիները փառաբանած ըլլալու մեղադրանքին դէմ , և տ'Օսօնվիլ , որ իրեն պատասխանելու պաշտօն ստացած էր, առողջ և ճկուն սճով մը սուր ծաղրանքներ սահեցուց : Մինչեւ 1880 հռչակաւոր գրագէտը նոր բան մը հրատարակեց : Յետոյ արտադրողական գործունէութեան նոր շրջանի մը մէջ մտաւ , որ տեւեց մինչեւ 1887 : Յաջորդաբար գրեց մեծադժոխ գրքոյկներ , ինչպէս Անուանաշուծութեան Խնդիրը , Սպաննող Կիները եւ Գողցող Կիները , Նախակ Պ. Նախի , որուն մէջ կը բացատրէ թէ ինչո՞ւ համար չէ Ֆրանսայի արդի ընկերային կազմակերպութեան , Հայրութեան Հետազոտութիւնը : Երեք թատերախաղեր ալ գրեց , որոնց վերջինն էր Փրանսիայօնը : 1887էն վերջը , բաւականացաւ յաւաքաբաններ գրելով , իր կամ ուրիշներու գիրքերուն համար , և թերթերուն մէջ նամակներ հրատարակելով՝ օրօտան խնդիրներուն վրայ : Բայց բոլորովին հրամարած չէր թատրոնին : Իր պարտաւ ժամերուն երկու թատերախաղեր գրեց , զորս չարունակ կը սրբադէր և որոնք տաժանագին երկունք մը ունեցան , Les Nouvelles Couches , տեսակ մը ընկերային երգիծաբանութիւն և La Route de Thèbes , զոր յետոյ կոչեց La Troublante : Այս վերջին թատերադրութիւնը , որուն անգտանելի եղքը (dénouement) իր ամէնէն բուն մտալիւսմանէն մէկը եղաւ մինչև կեանքին վերջը , սա նիւթին շուրջը կը դառնայ թէ՛ հանճարի տէր մարդ մը որ կը ծերանայ , կրնա՞յ ինքզինքը սիրցնել մանկամարդ կնոջ մը : Գէթ այսպէս կը հաւատասէն իրազեկներ :

1892 մայիսին Ալեքսանդր Տիւմա 527,000 Քրանքի ծախսից իր պատկերներու ժողովածուն և յաջորդ հոկտեմբերին ալ, իր մէկ ապարանքը: Այն ատեն զրոյց տարածուեցաւ թէ՛ երկարատեւ հանգարտութենէ մը վերջը, որուն միջոցին բաւականացած էր կրննորու պղատոնական բարեկամ մը ըլլալով, Տիւմա յանկարծ զգացած է իր երկտառարկական սէրերուն վերածնունդը: Ի՞նչ որ ալ ըլլայ, ա՛յ անկէ ետքը զոհացաւ յարկաբաժինով մը և ամառը կ'անցըէր Շանֆլուսի վիլլան մէջ, զոր իրեն կոտակեց Լէօլէն, Օրէնա Քոֆիքի Տնօրէնը, 10,000 Քր.ի եկամուտով մը: 1895ին կորանցոյց կինը, որ այն ատեն 69 տարեկան էր և շատոնց անգամայոյժ: Երկու ազջիկ ունեցած էր, Քօլէզ և Ժանին: Մինչև տասերկու տարեկանը ուզեց որ Քօլէզի մազերը կարճ կտրուին և իբր մանչ-ազջիկ հագուէր, «որովէս զի պըրուէի մը չգտանայ»: Հագեղաշտ էր, բայց ո՛ր և է վարդապետութիւն, ո՛ր և է կրօնը չընդունելով, ազատ մեծցուց իր ազջիկները, զերծ կրօնական ազդեցութենէ: «Ես զիրենք ազատ ձգեցի, կ'ըսէր. երբ որ չափաճաւ ըլլան, կրնան իրենց ուղածը ընտրել»: Կարճ ատեն մը այրի մնալէ վերջը, Տիւմա Որդի 1895 յունիսին երկրորդ ամուսնութիւն մը կնքեց: Այդ միջոցին տակաւին կորովի կ'երեւար. բայց չատ չանցած իր բոլոր կարողութիւնները փնայտն և զգաց թէ վախճանը մօտ է: Տակաւին յարմար ելք մը կը փնտռէր իր La Troublanteին, զոր Քոմէտի Ֆրանսէզին խոստացած էր: Օր մը, կը ծանուցանէր Քոմէտի Ֆրանսէզի վարիչին թէ հիւանդ է, թէ բժիշկ կանչած է, և կ'աւելցնէր. «Ենթադրեցէք թէ մեռած եմ»: Հոկտ.ին կը գրէր. «Ա՛յ յոյս մի ունենաք իմ վրայ. . . յաղթուեցայ. . . ներեցէք, կ'ապահովեցնեմ ձեզ թէ յանցանքը իմն չէ»: Քանի մը օր ետքը, թէև խիստ տկար, Տիւմա ուզեց ներկայ ըլլալ Էմիլ Օֆիէի յիշատակարանին բացումին: Օղը զով էր և անձրեւոտ: Երբ Շանֆլուսի վիլլան մտաւ, գլխու անտանելի ցաւերէ բռնուեցաւ և հարկադրուեցաւ անկողին իյնալ: Կատարեւապէս թմրած վիճակ մը ունէր. քանի մը օր ետքը ինքզինքը գտաւ, խօսեցաւ կնոջը և ազջիկներուն հետ և այն պահուն որ կը կարծէին թէ փրկուած է, յանկարծ չիջեցաւ առանց տառապանքի: Ունեցած հարստութիւնը կտակած էր կնոջը և ազջիկներուն: Այլ պահանջէր որ առանց հանդիսաւորութեան, առանց կզերի, առանց դամբանականի թաղեն զինքը: Մարմինը Բարիզ փոխադրելով, թաղեցին Մանմաուզի գերեզմանատունը:

«ՃԼԻՐՏԷՐ ԾԱՐԳԻՅԷՒ»

Գ Ն Ա Ն Ա Տ ՈՒ Մ Ը

«ՄՍ.ՍԻՍ»-Ի ԾՈՒԲՋԸ

ՃԼԻՐՏԷՐ ԾԱՐԳԻՅԷՒ Պատասխանատու-
Տնօրէն Յակոբ Է. ֆ. Վարձապետան՝ խմբագրու-
կան մասնաւոր յօդուածով մը՝ վեր կը հանէ
Մասիսի լրագրական նորութիւնները, գրա-
կան ուղղութեանը և յաջողութեանը մասին
գնահատող միջոցաւ իշխանութիւններով և համա-
կիր շնորհաւորութիւններով, որոնց մէջ կը
բերենք հետեւեալ զլրատու մասերը, շնոր-
հակալութիւնով ու համոյթով զիտելով առ-
կեղծ պաշտօնակիցի իր համակիր վերաբե-
րումը, որով կը պատուէ մեզ և որով կը
շեշտէ **Մասիսի** մէջ մեր մտչուցած նորու-
թիւններու ուղղութիւնը:

Շեշտելէ և գնահատելէ ետքը եւրոպա-
կան ու ամերիկեան թերթերու կիրարկած
նորութիւններու ուղղութիւնը, մեր պաշտօ-
նակիցը կը յարէ. —

«Մեր Հայերէն Ծառաքաթերթերուն
մէջ **Մասիս** Հանդէսը այս մասին
առաջնութիւնը շահած է. յիշուած
թերթին նմանք Սումեյի կողմէ հրատա-
րակութեան սկզբնաւորութենէն իվեր,
գրեթէ ամէն քիւերուն մէջ կը հանդի-
պինք նորութեան մը՝ որ արժանի է
գնահատութեան ու շնորհաւորութեան:
Օրինակի համար, թերթին խիստ գեղե-
ցիկ եւ օգտակարութիւնը անուանալի
բովանդակութենէն զատ, եթէ աչքէ ան-
ցնենք հրատարակած մրցումները՝ անա-
շելի կը գտնենք»:

Ու հոս կը թուէ մեծ մասը **Մասիսի**
առջի թիւէն իվեր մեր հրատարակած մը-
ցումներուն: Ու կ'աւելցնէ. —

«Դարձեալ **Մասիս** իր վերջին քի-
ւերէն մէկով քննարկողներուն կ'առա-
ջարկէ հաշուական հարցում մը, լու-
ծողին հետեւեալ պարզելը խոստանա-
լով [*]. — «Եթէ ճիշդ լուծողը պատշաճ-
եալ մըն է առեւտրական տունի մը,

ապրիլի յանձնարարականի՝ մը միջո-
ցով եւ մասնաւոր բաանկցութիւնով՝
յաւելում մը պիտի ըլլայ իր ամսաթ-
շակին վրայ մեծնշեմական կերպով:
Եթէ անպատշաճ մէկն է, նմազու-
րեանս կողմէ իր անձին ու յաշու-
քիւններուն համեմատ՝ գնահատուցիչ
պատշաճ մը պիտի հաշուաւորուի»:

«Ենովք Սումեյի այս գիտքը գարնա-
նալի ըլլալով մէկտեղ՝ շնորհաւորու-
թեան արժանի է:

«Գոհունակութիւնով կը տեսնենք թէ
այս տեսակ նորութիւններ **Մասիս**
Հանդէսին միջոցով է որ մուտք կը գտնեն
մեր մէջ եւ առաջ լրագրութեան
առողջիմութեանը տեսակէն օգտա-
կար ըլլալով՝ թերթին խմբագիրը ենովք
Սումեյի արժանի է շնորհաւորութեան»:

ԵՌԱՆՔՍՓՈՒԻ ԿՏԱԿԸ

Երանքսքուի կտակին մասին մեր պաշտ-
պանած դատին [**Մասիս** Թիւ 37] կը ծայ-
նակցի **Մանգումի** իր հետեւեալ հրատա-
րակութիւնով. —

Յայտնի է թէ Երանքսքու իր կենդանու-
թեանը հոգացած էր իր քրոջ ամբողջ պի-
տոյքը և անոր անունով երկու մեծ տուն
գնած էր Բերայի մէջ: 24,000 տոկիի կտակ
ընող այս բարեբարը այնչափ ազատմամբ էր
քրոջը ապագան որ կտակին մէջ անոր խօսքը
անգամ չէր ըրած և ամբողջ հարստութիւնը
յատկացուցած Հայ եկեղեցիի չքաւոր զաւակ-
ներուն կրթութեան և դաստիարակութեան:
Շէրիի օրէնքը որ ճշմարտապէս արդարու-
թեան վրայ հիմնուած է, կը տրամադրէ որ
երբ որ և է մէկը կտակ մը կամ վագֆ մը
ընէ կարօտեալներու, աղքատներու նպաս-
տին և երբ կտակին հասոյթը բաժնուի աղ-
քատներու, այն առնէ եթէ կտակ ընողին
ընտանեկան պարագաներուն ու ազգական-
ներուն մէջ չքաւորներ, օգնութեան կարօտ-
ներ կան անոնք նախապատուութիւն ստա-
նան միւս նպատակներէն և ուրիշ աղ-
քատներու եթէ մէկ բաժին կը տրուի, կտակը
ընողին պարագաներուն պէտք է տալ երկու

[*] Տեսնել քիւ 37-ի կողմին չորրորդ
էջը: Խմբ. Ծան.

կամ երեք բաժին : Արդ , բանի որ եռան-
նէսքու բոլորը համար բան մը չէ ըսած իր
կտակին մէջ , եթէ անոր քոյրը աղքատ է ,
չքաւոր է և օգնութեան կարօտ և եթէ խառն
ժողովը կ'ուզէր խիղճի պարտք մը գոհա-
ցնել , ոչ թէ կտակին մէկ քաւորը տալու
էր կտակարարին բոլորը , այլ երբ այդ զբա-
ղաւորութիւն հասոյթովը ուրիշ անկարողներու ,
չքաւորներու օգնէր , կրնար եռանդաբեր
քոյրն ալ անոնց կարգը դասել և երբ միւս
աղքատներուն մէկ բաժին տար , անոր
կրնար երկու կամ երեք բաժին յատկացնել
Ամէն պարագայի մէջ անդամներն սխալ
մըն է այս 6000 ոսկիի տուչութիւնը և քաւո-
րոյս ենք որ պատկանեալ մարմինը չի թոյ-
լատրեր որ հանրային դրամը՝ անհասանելի
հասցենով որոշումին զոհ ըլլայ : Եւրիկ օրէնքը ,
ուրիշ կարեւոր տրամադրութիւն մըն ալ ունի
կտակներու մասին . երբ անչափահասներու և
աղքատներու նպատակին կտակ մը ըլլայ և
կտակակաւորը կտակին տրամադրութիւնը
տառական կերպով չի գործադրէ , բանիմաց
անձ մը կրնայ նպատակակալ անչափահասնե-
րէն և չքաւորներէն մէկ քանիին փոխանոր-
դարար դատ բանալ Եւրիկի դատարարին առ-
ջեւ և պահանջել կտակին տառական գործա-
դրութիւնը . եթէ կտակակաւորը դժկամակի
և կամ շարունակէ շեղեցնել կտակը իր նպա-
տակէն , դատարարը այն ատեն՝ կը ստիպէ
կտակակաւորը անպատճառ կտակին տրա-
մադրութիւնները գործադրելու : Կը յուսանք
որ Վարչութիւնը նկատողութեան կ'առնէ մեր
այս անկեղծ Թելադրութիւնները և Տնտես.
Խորհուրդին արդար զխտողութիւնները ու
գործը Օրէնքին համաձայն կը յանձնէ Տնտե-
սական Խորհուրդին նկատողութեան , վերջ-
նական որոշում մը տալէ և հանգուցեալին
բոլորը նետ կարգադրութիւն մը ընելէ առաջ :

Շոյն ոգին կը պաշտպանէ ու կը վաւե-
րացնէ **Բիւզանդիոն** ալ , գրեւով . —

Այս օրես նապարակի վրայ ծեծուող
կարեւոր խնդիրն է այն որոշումը՝ որով
գաւառացի կառօտ տղոց իրաւունքն մաս
մը , կարեւոր մաս մը , կորցելով հարուստ
անձի մը կ'ըստիւտի , կարծես թէ իրենց
գրգանքն հանգին ու նուիրէին : Լաւ

կ'ընէ որ Տնես. Խորհուրդը ճնշուիւն բա-
նայ և երեսն հաճէ պատասխանատու-
ներ , Ո'վ կ'ըսէ որ Տնես. Խորհուրդը
իրաւունք չունի և ձեռնաս չէ : Ուրեմն
ինչո՞ւ Օրէնքին մէջ դրուած է սա պարբե-
րութիւնը .

« Կտակներու ճնշումութիւնը Տնեսական
Խորհուրդին կը վերաբերի : Այս Խորհուրդը
պէտք է հսկէ որ ամէն կտակ օրինաւոր կեր-
պով վաւերացուած ըլլայ , կտակողին դի-
տաւորութիւնը անխախտ պահուի և գոր-
ծադրութիւնը ապահով ըլլայ :

« Այս տրամադրութեանց համեմատ ,
կտակի վերաբերեալ յատկ կանոններ ու
մասնաւոր Հրապարակութիւն մը պէտք է
հաստատէ Տնեսական Խորհուրդը » :

Հետեւաբար , Տնես. Խորհուրդը իրա-
ւունք ունի խնդիրն միջամուխ ըլլալու ,
իրաւունք ունի նաեւ՝ Խանութիւնի կտակէն
հարիւրին 25 պակեցեցնելու որոշում տուող-
ներուն դէմ ելելու և հաշիւ պահանջելու
թէ ի՞նչ հիմք վրայ կ'առնեն յիշեալ տղոց
իրաւունքը : Ուրիշ մը կ'առարկէ թէ Գա-
րակեղեան կտակին համար ալ Պատրիար-
քարանք զիջում քաւ և համաձայնութեան
եկաւ ժառանգորդներուն հետ : Այնեղ
խնդիրը տարբեր էր : Հոն՝ գումարը կը գո-
նուէր ժառանգորդներու ափին մէջ , որոնք
ինքնինքնին ազատ կը զգային իրենց չափ-
անոր համար ալ Պատրիարքարանք անու-
ցեղը կապեց գործը , և գո'նէ բան մը ձեռք
բերելու համար զեղջ մը ընելով գումար մը
ստացաւ . մինչդեռ հոս՝ գումարը ժառան-
գորդներուն ձեռք չէ , այլ Պատրիարքա-
րանքին . երբ ժառանգորդները որ եւ է իրա-
ւունք ունենալ կը կարծեն՝ քող իրենց
ժախք ընեն և հաստատեն իրենց իրաւուն-
քը . Պատրիարքարանք հիմա փառաւ իսկ
ժախքան պէտք չունի իր իրաւունքին հաս-
տատման համար , քանի որ օրինաւոր կտակ
կայ մէջեղը : — Կ'ըստի նաեւ թէ հան-
գուցեալը իր երջը բաժին չէ հանած իր
կտակով : Չկարողցի՞նք արդեօք թէ բարե-
յիշատակ Խանութիւն Բերայի մէջ երկու
տուն նուիրէր է իր երջը , իր կենդա-
նութեանը :

Հիմնադիր Կ. Ս. Իվթի-ճեԱն : Արտատպ. ՏՕԳԹ. Ե. ՄԱՍԻՆ. Տպագր. ՃԵՀԱՆ :

Հ Ր Ա Ն Տ Թ Ա Շ Ճ Ե Ա Ն

ԳՈՐԾԱԿԱՍՏԱՐ - ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅԻՉ «ԲԱՍՄԱՍ»

Որ թերթին կողմէ իրաւասութիւն ունի յայտարարութիւններու, ինչպէս առեւտրական գործառնութիւններու համար ներկայանալու փափաքուած հաստատութեանց, և Մառխուր անունով բանակցելու և համաձայնութիւններ կնքելու :

ՏՈՒՆԷՆ ՆԵՐՍ.— Հրապարակ ելաւ Բասիմի այս աշխատասիրութիւնը, որ կը պարունակէ ընտանեկան և ընկերական հարցերու վրայ շահեկան և հետաքրքրաշարժ տեսութիւններ, ժողովրդական ոճով : Բասիմի գրեւակերպը արդէն ծանօթ ըլլալով հանրութեան, վստահօրէն անոր այս գործն ալ պիտի արժանանայ այն ուրախ ընդունելութեան, որով վարձատրուած են միշտ հեղինակին գրիչի արտադրութիւնները : Գինը, խիստ աման դրուած է, որպէս զի ժողովուրդին ամէն դասակարգին մատչելի ըլլայ : 3½ զրշ., 200 էջ ունեցող այս գիրքին համար : Կը ծախուի բոլոր գրավաճառներուն քով :

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ Մ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԱՄԵՆԱՎԵՐՁԻՆ ԴՐՈՒԹԵԱՄԲ կը դարձանէ ամէն տեսակ ահուայի և լինտի հիւանդութիւնները, փաճ աղաները կը լեցնէ՝ առողջ աղաներու պէս երկար առեն գործածուելու պայմանով :

ԲՈՂՈՐՈՎԻՆ ՆՈՐ ՄԵԹՈՏՈՎ, նուրբ, ճաշակաւոր և դիմացկուն արուեստական աղաներ կը պատրաստէ, բնակոյնին ճիշդ նման :

Հիւանդ կ'ընդունի ամէն օր իր դարմանատան մէջ, Բերա, Մեծ Բարձաք-Գաբու, Թիւ 8 : Կարօտ հիւանդները ձրի կը դարմանէ հինգ-շաբթի օրերը՝ Բերաի Աղքատախնամ դարմանատունին մէջ :

Կիրակի օրերը ժամադրուքեալք կ'ընդունի :

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԵՅԱԻ Մարդկային Մարմինը, Հեղինակութիւն Տօքթ. Յովսէփ Տ. Ստեփանեանի, գեղեցկապէս պատկերազարդուած բազմաթիւ նկարներով : Մարդկային կազմախօսութեան դասաւանդութեան համար լաւագոյն գիրքը, յոնձնարարելի ամէն վարժարաններու : Մարդկային Մարմինը կը հետաքրքրէ նաեւ ոչ-դպրոցական ընթերցողը, բացատրելով մարդուն կազմաբանութեան գաղանիքները : Գինը 10 զրշ. Կը գտնուի ամէն գրավաճառի քով :

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԸ

Հ Ի Ն Օ Ր Ե Ր

Պուէճ Խաչատուր Միսաքեան

Եւ իր ժամանակակից իմացականին վրայ հայեացքներ

ԳՐԵՑ Ե. Գ. ՄԵՐԶԵՐԱՆ

ԺԹ.ԳԲ Դարու Թրքահայերու իմացական, բարոյական և արուեստական վիճակին վրայ վաւերական յիշատակագիրներով զարդարուած հատոր մըն է՝ 140ի չափ էջերով, որ կը խօսի Պուէճ Խաչատուր Միսաքեանի և իր ժամանակակից մտաւորականներուն վրայ : Կը ծախուի Կ. Պոլիս բոլոր գրավաճառներուն քով, գին 7½ զրուշ :

ԱՌՍ.ՆՁՆԱՇՆՈՐՀԵԱՆ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԵԱՆ ԸՆԿ.

ՊԱՆԺԱՆ

Դրամագլուխ և պահեստ ֆրանք 9,500,000

Վերադաճողագրական

դրամագլուխ և պահեստ » 142,740,000

ՊԱՆԺԱՆ Ընկերութիւնը կ'ապահովագրէ հրդեհի դէմ ամէն տեսակ կահ կարասի ևն., Կ. Պոլսոյ և Թուրքիոյ զլիսուսը քաղաքներուն մէջ շատ յիւրամատչելի պայմաններով. իսկ իր միւս երկրորդ ճիւղը անմրցելի գիներով և պայմաններով օժտուած է. Կը կատարէ խառն ապահովագրութիւն, ընտանեկան, մանուկներու, ևն. ևն.:

Ընդհանուր գործակալ Թուրքիոյ ԱՐՇԱԿ ՈՒՆՃԵԱՆ

Ղալաթիա, Տեօյէ Օրիէնդ Պանֆի կից, Սինասօն Խան.



Կը դանտի բոլոր
դեղագործներուն քով:
Թուրքիոյ ներկայա-
ցուցիչ Ռ. Սօլաքեանց.
Կ. Պոլիս:

ՀԱՅՈՒՇԵԱՑ ՎԱՐԺԱՐԱՆ, ԱՏԱԲԱԶԱՐ

Հայուհեաց Վարժարանի նպատակն է Հայ ազջիկներուն տալ լուրջ դաստիարակութիւն մը՝ դարգացած և բարեկիրթ աստիճաններ և դաստիարակութեան դորձին օժանդակներ պատրաստելու համար: Վարժարանին տեսչութիւնը աշակերտուհիներուն ֆիզիքական, իմացական և բարոյական զարգացումը միշտ խղճամիտ հոգածութեան առարկայ կ'ընէ: Բնիկ և Ամերիկացի 12 ուսուցիչներէ կազմուած ձեռնհաս ուսուցչական խումբ մը կ'աւանդէ Հայ., Անգլ., Թուրք. և Ֆրանս. լեզուները, ինչպէս նաեւ բնական, իմաստասիրական, չափական և ուրիշ գիտութիւններ: Մնայուն կարուհի մը կ'աւանդէ ձեռագիրտութեան, կարի և ձեռագործի դասերը: Գիշերօթիկներու տարեթոշակն է 12 օսմ. ոսկի, որուն կէսը պէտք է հատուցանել տարեչրջանին սկիզբը և կէսը Ծնունդի արձակուրդին: Դաշնակի և երգեհոնի համար կը պահանջուի 5, 3 և 2 1/2 օսմ. ոսկի, դասաւարտեան թիւին համեմատ: Վարժարանին յառաջիկայ տարեչրջանը կը սկսի Սեպտ. 11ին (Ն. Տ.), Դշ. իրիկունը: Աւելի անգնելութեանց համար խնդրել Վարժարանին Յայտագիրը կամ դիմել Մր. Բիթի, Պայպըլ Հաուս, Կ. Պոլիս, կամ գրել Տօքթ. Ս. Էֆ. Գալալճեանի, Ատենապետ Խնամակալութեան, Ատաբազար:

ՓԱԼԱԳԱՇԵԱՆ ԱՂԶԿԱՆՑ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐԺԱՐԱՆ

ԼԵՋՈՒԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ, ԳԻՇԵՐՈԹԻԿ ԵՒ ՅԵՐԵԿԵԱՅ

Կ. Պոլիս, Գասը-Գիւղ, Մէօնիւրսար հասէսի .

Շրջ Տարեցոսն

Մասնագէտ ուսուցիչներու և ուսուցչուհիներու ձեռամբ, տոհմային ուսումներէ և զիտական անհրաժեշտ ծանօթութիւններէ զատ, հիմնական կերպով կ'աւանդուին Հայերէն, Օսմաներէն, Ֆրանսերէն, Անգլերէն և Գերմաներէն լեզուները՝ հանդերձ խօսելալարժեքեամբ (բաւարիք), ինչպէս նաև Գծագրութիւն, Տնարարութիւն, Կար ու Ձեռ, Ասեղնադորժութեան զանազան տեսակները (ձեռքով և մեքենայով), ձայնական և գործիական երաժշտութիւն, մասնաւորապէս Դաշնակ և Ջութակ : Գիշերօթիկները կը վայելեն կատարեալ սնունդ և բնական կան անթերի խնամք, սուղջապահիկ պայմաններու մէջ : Բանակցութեան համար զիմել վարժարան՝ Տեսուչին կամ Տեսչուհիի : Մանրամասն տեղեկութիւն կարելի է ստանալ նաև, Գշ. Եշ. Շր. օրերը ժամը 5էն 9 զիմելով «ԳԱՐՈՒՆ» Գրատունը, Մեծ Նօր խան, վերի յարկ, թիւ 55 : Աշակերտուհիներու վերամուտը տեղի պիտի ունենայ Սեպտ. 3, Բշ. օր :

Հիմնադիր-Տնօրէն

Յ. Գ. ՓԱԼԱԳԱՇԵԱՆ

ԱՓՈՍԹՈԼԻՔ ԻՆՍՅԻՅԻԹ, ԳՈՆԵԱ

(ՃԵՆԱՆԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ)

Վարժարանիս ստաջիկայ տարեշրջանը կը սկսի Սեպտ. 13/26ին : Հաստատութիւնս կէտ նպատակի ունենալով գոլէճական ծրագրով մը բարձր և միանգամայն գործնական կրթութիւն մը տալ ուսանողներուն մասնագէտ դասատուներու միջոցաւ, կ'աւանդէ Օսմ. Հայ. Անգլ. Ֆրանս. և Յունարէն (Յոյն աշակերտներու համար) լեզուները, ինչպէս նաև բնական, բնապատմական, ուսողական, փիլիսոփայական, իրաւագիտական և վաճառականական գիտութիւնները : Մեծ խնամք կը տանի աշակերտներու բարոյայան մաքրութեան և ֆիզիքական առողջութեան : Դպրոցական նոր տարուան համար ուսուցչական մարմինին վրայ տեւեցած է նաև համալսարանական բժիշկ մը՝ որ պիտի դասախօսէ սուղջապահական և բնական գիտութիւններ և ճրիպպէս պիտի դարմանէ հիւանդացող աշակերտները, եթէ զանուին : Գիշերօթիկներու տարեթոշակն է 10 Օսմ. սակի, որուն կէսը վճարելի կանխիկ և բիւս կէսը Միունդին : Մանրամասն տեղեկութեան համար զիմել Տնօրէն Տօքթ. Ա. Յ. Հայկազեանի, Դանիա :

“ՄԱՍԻՍ,,Ի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Պոլիսի և Դաւառներու համար տարեկան 60 դրշ :

Արտատնօմանի » » 14 Փրանք :

Թղթատարութեան ծախքը մեր վրայ :

Բաժանորդները իրաւունք ունին ստանալու մեր տարգիւնները,

միշտ ձրիաբար, թղթատարութեան ծախքն ալ մեր վրայ :

Մասիսի բաժանորդագրութիւնը բացարձակապէս կա խիկ է :

Զննատարակուած ձեռագիրները ետ չեն դարձուիր :

Նամակ կամ որ և է դրութիւն ուղղել առ

Ե Ն Ո Վ Ք Ա Ր Մ Է Ն

“ՄԱՍԻՍ,,Ի Հասցեով

Պապը Ա.Լի ճասէսի, Թիւ 38

درعليه باب عالی جادهسندہ نومرو ۳۸ «ماسيس» غزوةسى ادارهخانهسى

Rédaction de la Revue «MASSIS»

N. 38, Avenue de la Sublime Porte

CONSTANTINOPLE

Ռ Օ Պ Է Ր Դ Գ Օ Լ Է Ճ Վարժարանիս յառաջիկայ տարեշրջանը կը սկսի Սեպտ. 5/18ին : Կարգադրութիւններ կըլտն են վաճառականաւ կան ուսումը բաղձացուած կատարելութեամբ աւանդելու համար : Վարժարանիս մասնաւոր բժիշկը՝ ուսանողներուն առողջութեան, մարմնամարդներուն և խաղերուն, խնչդէս նաեւ վարժարանիս ընդհանուր առողջական վիճակին վրայ կը հսկէ : Մայրնամարդի նոր և զեղեցիկ չէնք մը կառուցուած է նորոգապէս, իր մէջ ունենալով մարմնամարդի ամէն տեսակ գործիքներ, վերջին դրութեանց համաձայն :

“ՄԱՍԻՍ”ի վեցամսեայ Շրջանի հաւաքածոն, որ 550 էջէ բաղկացած գրական գեղեցիկ հասոր մը կը կազմէ, կրնայ ստացուիլ խմբագրութենէն, կանխիկ փոխարժեքով՝ 30 դր. : Կազմուած 35 : Թարգմանով որկուելիք Հասորներու համար պէժ է 5 դր. աւելի վնարել :

Դպրոցներու վերաբացումին՝ տղոց ձեռքը ընկիր դասագիրքեր տուած ըլլալու վստահութեամբ գործածել՝ Փայադաշեանի հրատարակութիւններէն՝ Ա.—Պատկերներն Թուագիտութիւնը : Բ.—Թուագիտութիւն Տարրական Դասընթացի (Ա. և Բ.Տարի) : Գ.—Պատկերներն Աշխարհագրութիւնը (քարտէսներով) : Դ.—Աշխարհագրութիւն Տարրական Դասընթացի : Ե.—Պատկերներն Երգարանը (հաւաքածոյ մանկապարտէզի երգերու) : Զ.—Այբեկարան Ընթերցարան ֆրանսերէն լեզուի :